Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
հունիսի 25-ի նիստի N 29
արձանագրային որոշման

(Գործառնություն թիվ 46437)

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(Երևանի քաղաքային լուսավորության ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

Ամսաթիվ՝ [2015թ. մայիսի 11]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ I - ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ և ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 2
Բաժին 1.01. Ստանդարտ պայմաններ և դրույթների ներառումը 2
Բաժին 1.02. Սահմանումներ 2
Բաժին 1.03. Մեկնաբանություն 5

ՀՈԴՎԱԾ II - ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 5
Բաժին 2.01. Գումար և արժույթ 5
Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ 5
Բաժին 2.03. Օգտագործումներ 6

ՀՈԴՎԱԾ III - ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ 7
Բաժին 3.01. Ծրագրի այլ Հաստատական հոդվածներ 7

ՀՈԴՎԱԾ IV - ԿԱՍԵՑՈՒՄ, ԱՐԱԳԱՑՈՒՄ, ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ 8
Բաժին 4.01. Կասեցում 8
Բաժին 4.02. Մարման ժամկետի արագացում 9

ՀՈԴՎԱԾ V - ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ 9
Բաժին 5.01. Գործողության մեջ մտնելուն նախորդող պայմաններ 9
Բաժին 5.02. Իրավաբանական եզրակացություններ 10
Բաժին 5.03. Գործողության մեջ չմտնելու հիմքով Դադարում 11

ՀՈԴՎԱԾ VI - ԱՅԼ 11
Բաժին 6.01. Ծանուցումներ 11

ՀԱՎԵԼՎԱԾ 1 - ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ԴԱՍԵՐ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ 2

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ [2015թ. մայիսի 11]-ով թվագրված,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ("Վարկառու") և **ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ** ("Բանկ") միջև:

ՆԱԽԱԲԱՆ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը հիմնադրվել է տրամադրելու ֆինանսավորում կոնկրետ ծրագրերի համար՝ խրախուսելու անցումը բաց շուկայական կողմնորոշմամբ տնտեսությունների և խթանելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնք ստանձնել են հանձնառություն և կիրառում են բազմակուսակցական ժողովրդավարության, բազմակարծության և շուկայական տնտեսության սկզբունքները,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Վարկառուն մտադրված է իրականացնել Ծրագիրն, ինչպես նկարագրված է Հավելված 1-ում, որը մշակված է օժանդակելու Երևանի Քաղաքապետարանի ("Երևանի Քաղաքապետարան") 28 ընտրված փողոցներում քաղաքային լուսավորության համակարգի արդիականացմանը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Ծրագիրն իրականացվելու է [«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» փակ բաժնետիրական ընկերության] (“Ծրագրի սուբյեկտ”) կողմից, որը հանդիսանում է մունիցիպալ ընկերություն, ստեղծվել և գործում է Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն, և որի 100 տոկոս բաժնետերը Երևանի Քաղաքապետարանն է, Վարկառուի կողմից ֆինանսական աջակցությամբ,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Վարկառուն խնդրել է օժանդակություն Բանկից՝ Ծրագրի մի մասի ֆինանսավորման համար,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Վարկառուն խնդրել է, և Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և բնապահպանության գործընկերությունը (“E5P”) դիտարկում է մինչև 2,000,000 ԱՄՆ դոլար Ծրագրի համաֆինանսավորում (“E5P Դրամաշնորհային համաֆինանսավորում”) տրամադրելու հարցը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը դրամաշնորհային հիմունքներով տեխնիկական համագործակցության միջոցների կազմակերպման փուլում է՝ Ծրագրի իրականացմանը աջակցելու համար, և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ այն, որ Բանկը համաձայնել է *inter alia* (ի թիվս այլոց) վերոհիշյալի հիման վրա, տրամադրել վարկ Վարկառուին 4,000,000 ԱՄՆ դոլար գումարի չափով՝ համաձայն պայմանների, որոնք սահմանված կամ հղվում են սույն Համաձայնագրում և սույն ամսաթվով թվագրված Ծրագրի համաձայնագրում՝ Ծրագրի Սուբյեկտի և Բանկի միջև ("Ծրագրի համաձայնագիր", ինչպես այն սահմանված է Ստանդարտ պայմաններ և դրույթներում) և սույն ամսաթվով թվագրված Ծրագրի աջակցության համաձայնագրում (ինչպես այն սահմանված է ստորև)՝ Երևանի Քաղաքապետարանի և Բանկի միջև:

Այսուհետ կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I – ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ և ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բաժին 1.01. Ստանդարտ պայմաններ և դրույթների ներառումը

Բանկի՝ 2012թ. դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմաններ և դրույթների բոլոր դրույթները սույնով ներառվում ու դառնում են կիրառելի սույն Համաձայնագրի նկատմամբ նույն ուժով ու գործողությամբ, եթե դրանք ամբողջությամբ սահմանված լինեին այստեղ, սակայն ենթակա են հետևյալ փոփոխությունների (այսպես փոփոխված այդ դրույթներն այսուհետ անվանվում են "Ստանդարտ պայմաններ և դրույթներ").

(a) «Արգելված պրակտիկա» սահմանումը Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 2.02-ում պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, փոփոխվի հետևյալ կերպով.

««Արգելված պրակտիկա»	նշանակում է որևէ Կոռումպացված պրակտիկա, խարդախություն, հարկադրանք, քողարկված պրակտիկա կամ գողություն:»

(b) Հետևյալ սահմանումը պետք է, սույն Համաձայնագրի նպատակների համար, ավելացվի Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 2.02-ին.

««Գողություն»	նշանակում է նշանակում է այլ անձին պատկանող գույքի յուրացում:»

Բաժին 1.02. Սահմանումներ

Որտեղ որ նրանք օգտագործվել են սույն Համաձայնագրում (ներառյալ Նախաբանը և Հավելվածները), եթե այլ բան սահմանված չէ, կամ եթե

համատեքստն այլ կերպ չի պահանջում, Նախաբանում սահմանված տերմիններն ունեն այնտեղ նրանց տրված համապատասխան իմաստները, Ստանդարտ պայմաններ և դրույթներում սահմանված տերմիններն ունեն այնտեղ նրանց տրված համապատասխան իմաստները, իսկ հետևյալ տերմիններն ունեն հետևյալ իմաստները.

"Վարկառուի լիազորված ներկայացուցիչ"	նշանակում է Վարկառուի Ֆինանսների նախարար:
"Բիզնես պլան"	նշանակում է գալիք երեք 3 օրացուցային տարվա բիզնես պլան այն Ծրագրի համար, որը մշակվել և հանձնվել է Բանկին Ծրագրի Սուբյեկտի կողմից և որը պարունակում է մանրամասն տեխնիկական պլաններ և պահանջներ, ֆինանսավորման պլան, շինարարության նախնական ժամանակացույց և բյուջե և գործառնական ծրագրեր և ընթացակարգեր, և ֆինանսական կանխատեսումներ Ծրագրի Սուբյեկտի գործունեության և Ծրագրի վերաբերյալ, և այդ բիզնես պլանը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել Ծրագրի Սուբյեկտի կողմից՝ Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ:
"Կորպորատիվ զարգացման ծրագիր"	նշանակում է որ կորպորատիվ զարգացման ծրագիր, որը պետք է մշակվի միջազգային խորհրդատուների կողմից և իրականացվի Ծրագրի Սուբյեկտի կողմից Ծրագրի կապակցությամբ և ֆինանսավորվի դոնորի կամ դոնորների կողմից: Այդ ծրագիրը պետք է աջակցի Ծրագրի Սուբյեկտին՝ բարելավելու իր կորպորատիվ, ֆինանսական և գործառնական կատարողականը և բավարարելու համապատասխան հոդվածների պահանջներին, որոնք ընդգրկված են Ծրագրի փաստաթղթերում (այդ թվում, սակայն չսահմանափակվելով, Ծրագրի Համաձայնագրում և Հանրային սպասարկման պայմանագրում), որոնց կողմ է հանդիսանում Ծրագրի սուբյեկտը, ինչպես նաև

	աջակցելու շարունակական կորպորատիվ զարգացման:
"Ծրագրի աջակցության համաձայնագիր"	Նշանակում է Ծրագրի աջակցության համաձայնագիրը Բանկի և Երևանի Քաղաքապետարանի միջև՝ սույն ամսաթվով թվագրված, ըստ որի Երևանի Քաղաքապետարանը հանձն է առնում հստակ պարտավորություններ Բանկի հանդեպ՝ Ծրագրի իրականացման կապակցությամբ:
"Հանրային սպասարկման պայմանագիր"	նշանակում է համաձայնագիր, որը պետք է կնքվի, Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ, Ծրագրի Սուբյեկտի և Երևանի Քաղաքապետարանի միջև, և այդ համաձայնագիրը կարող է ներառել սուբսիդիաների տրամադրման հետ կապված պայմաններ և որը պետք է, առնվազն, կարգավորի հետևյալ հարցերը. [(i) Ծրագրի Սուբյեկտի կողմից մատուցվող ծառայությունների քանակն ու որակը, (ii) Ծրագրի Սուբյեկտի՝ ֆիքսված տարեկան գործառնական ծախսերի բյուջեի կանխատեսումների վերաբերյալ համաձայնություն և Երևանի Քաղաքապետարանի կողմից վճարվելիք՝ ամսական սուբսիդիաների նախնական գնահատման բանաձևեր, և (iii) Ծրագրի Սուբյեկտի գործառնական ծախսերի բյուջեի կանխատեսումների տարեկան ճշգրտում՝ համաձայնեցված ծառայությունների մակարդակի նկատմամբ:
"Ֆինանսական տարի"	նշանակում է Վարկառուի ֆինանսական տարին, որը մեկնարկում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ին:
"Ենթավարկային համաձայնագիր"	նշանակում է վարկային համաձայնագիր, որը պետք է կնքվի Ծրագրի Սուբյեկտի և Վարկառուի միջև՝ Բաժին 3.01(a)-ի համաձայն, քանի որ նման

վարկային համաձայնագիրը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

Բաժին 1.03. Մեկնաբանություն

Սույն Համաձայնագրում հղումը համապատասխան Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին պետք է ընկալվի որպես հղում սույն Համաձայնագրի նշված այդ Հոդվածին, Բաժնին կամ Հավելվածին, բացի այն դեպքերից, երբ սույն Համաձայնագրով այլ բան է սահմանված:

ՀՈԴՎԱԾ II – ՎԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բաժին 2.01. Գումար և արժույթ

Բանկը համաձայնում է վարկի տեսքով տրամադրել Վարկառուին, սույն Համաձայնագրում սահմանված կամ հղվող պայմաններով 4,000,000 ԱՄԴ դոլար գումար:

Բաժին 2.02. Վարկի այլ ֆինանսական պայմաններ

(a) Օգտագործման Նվազագույն Գումարը պետք է լինի 100,000 ԱՄՆ դոլար:

(b) Վաղաժամկետ Մարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 ԱՄՆ դոլար:

(c) Չեղյալ հայտարարման Նվազագույն Գումարը պետք է լինի 500,000 ԱՄՆ

դոլար:

(d) Տոկոսագումարի Վճարման Ամսաթվերը պետք է լինեն յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը և հոկտեմբերի 16-ը:

(e) (1) Վարկառուն պետք է մարի Վարկը 14 հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումներով յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին և հոկտեմբերի 16-ին, Վարկի Մարման Առաջին Ամսաթիվը պետք է լինի Տոկոսագումարի Վճարման Ամսաթիվը, որն ընկնում է կամ անմիջապես հետևում է սույն Համաձայնագրի ստորագրման երրորդ տարելիցին և Վարկի Մարման Վերջին Ամսաթիվը պետք է լինի 2025թ. ապրիլի 16ը:

(2) Չնայած վերոհիշյալին՝ եթե (i) Վարկառուն չի օգտագործում Վարկի ամբողջ գումարը մինչև Վարկի Մարման Առաջին Ամսաթիվը, որը նշված է սույն Բաժին 2.02.(e)-ում, և (ii) Բանկը երկարաձգում է Վերջին Հասանելիության Ամսաթիվը, որը նշված է Բաժին 2.02.(f)-ում ստորև, մինչև որևէ մի ամսաթիվ, որն ընկնում է Վարկի այդ առաջին Մարման Ամսաթվից հետո, ապա Վարկի Մարման Առաջին Ամսաթվին կամ դրանից հետո գումարի յուրաքանչյուր օգտագործվող մասնաբաժին պետք է բաշխվի մարման համար՝ հավասար գումարներով Վարկի Մարման մի քանի Ամսաթվերի վրա, որոնք ընկնում են այդ օգտագործման ամսաթվից հետո (և Բանկը ճշգրտում է այդ կերպ բաշխված գումարներն ըստ անհրաժեշտության՝ յուրաքանչյուր դեպքում կլոր թվեր ստանալու համար): Բանկը պետք է ժամանակ առ ժամանակ ծանուցի Վարկառուին այդ բաշխումների մասին:

(f) Վերջին Հասանելիության Ամսաթիվը պետք է լինի 2018թ. մայիսի 11-ը, կամ ավելի ուշ ընկնող մի ամսաթիվ, որը Բանկը իր հայեցողությամբ կարող է սահմանել և տեղեկացնել Վարկառուին: Եթե Վարկի Հասանելի Գումարը կամ դրա որևէ մաս ենթակա է Ֆիքսված Տոկոսադրույքի և Բանկը հետաձգում է Վերջին Հասանելիության Ամսաթիվը, Վարկառուն պետք է անհապաղ վճարի Բանկին Պայմանների փոփոխության հետ կապված ծախսերի դիմաց այնպիսի գումար, որը ժամանակ առ ժամանակ կնշվի Բանկի կողմից և որի մասին Վարկառուն կծանուցվի գրավոր տեսքով:

(g) Հանձնառության Վճարի դրույքը պետք է լինի տարեկան 0.5 տոկոս:

(h) Վարկը ենթակա է Փոփոխվող Տոկոսադրույքի: Չնայած վերոհիշյալին, Վարկառուն կարող է, որպես տարբերակ, այդ պահին վճարման ենթակա ամբողջ Վարկի կամ դրա մի մասի տոկոսագումարը Փոփոխվող տոկոսադրույքով վճարելու փոխարեն որոշել վճարել Վարկի այդպիսի մի մասի տոկոսագումարը Ֆիքսված տոկոսադրույքով, համաձայն Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 3.04(c)-ի, այն պայմանով, որ սույն Բաժին 2.02(h)-ի նպատակների համար, Վարկի մայր գումարը, որն անցնում է Փոփոխվող տոկոսադրույքից Ֆիքսված տոկոսադրույքի, չպետք է 1,000,000 ԱՄՆ դոլարից պակաս լինի:

Բաժին 2.03. Օգտագործումներ

Հասանելի Գումարը կարող է օգտագործվել ժամանակ առ ժամանակ՝ համաձայն Հավելված 2-ի դրույթների՝ ֆինանսավորելու (1) Ծրագրի համար պահանջվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների կապակցությամբ կատարված (կամ, եթե Բանկը համաձայնում է, կատարվելիք) խելամիտ ծախսերը և (2) Մեկնարկային Կոմիսիոն Վճարը:

ՀՈԴՎԱԾ III – ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Բաժին 3.01. Ծրագրի այլ հաստատական հոդվածներ

Բացի Ստանդարտ Պայմանների Հոդվածներ IV-ում և V-ում սահմանված ընդհանուր հանձնառություններից՝ Վարկառուն պետք է, եթե Բանկն այլ բան չի նախատեսում.

(a) Վարկային միջոցները հասանելի դարձնի Ծրագրի Սուբյեկտի համար, Բանկի կողմից ընդունելի պայմաններով՝ համաձայն Ենթավարկային համաձայնագրի, Բանկի համար բավարար ձևով ու բովանդակությամբ,

(b) կիրառի Ենթավարկային Համաձայնագրի շրջանակներում իր իրավունքներն այնպես, որպեսզի պաշտպանի Վարկառուի և Բանկի շահերը, բավարարի սույն Համաձայնագրի դրույթները և իրականացնի այն նպատակները, որոնց համար տրամադրված է Վարկը,

(c) չփոխանցի, չփոփոխի, չեղյալ չհայտարարի և չհրաժարվի Ենթավարկային Համաձայնագրի որևէ դրույթից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ համաձայնի,

(d) դրդի Ծրագրի Սուբյեկտին կատարել Ծրագրի Համաձայնագրով սահմանված իր բոլոր պարտականությունները, այդ թվում, առանց սահմանափակման, իր այն պարտականությունները, որոնք վերաբերում են.

(1) Ծրագրի իրականացման աշխատանքային խմբի ստեղծմանը և շահագործմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.03-ում,

(2) Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.04-ում,

(3) բնապահպանական և սոցիալական հարցերին, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.05-ում,

(4) Ծրագրի իրականացման աջակցության նպատակով խորհրդատուների՝ աշխատանքի ընդունմանն ու օգտագործմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.06-ում,

(5) Ծրագրի և Ծրագրի Սուբյեկտի գործառնությունների հետ կապված հարցերի վերաբերյալ հաշվետվությունների պատրաստմանը և ներկայացմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.08-ում,

(6) ընթացակարգերի, գրառումների և հաշիվների պահպանմանը, Բանկի համար ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստմանը, աուդիտին և ներկայացմանը, ինչպես նաև Բանկին Ծրագրի և Ծրագրի Սուբյեկտի գործառնությունների հետ կապված ցանկացած այլ համապատասխան տեղեկատվության տրամադրմանը, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի Բաժին 3.01-ում, և

(7) Ծրագրի և Ծրագրի Սուբյեկտի ֆինանսական և գործառնական ասպեկտների համապատասխանությանը բոլոր հոդվածներին, ինչպես նախատեսված է Ծրագրի Համաձայնագրի 3.02 և 3.03 Բաժիններում,

(e) ձեռնարկի կամ դրդի, որպեսզի ձեռնարկվեն բոլոր այն լրացուցիչ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու բավարար միջոցներ Ծրագրի ավարտի համար:

ՀՈԴՎԱԾ IV – ԿԱՍԵՑՈՒՄ; ԱՐԱԳԱՑՈՒՄ; ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

Բաժին 4.01. Կասեցում

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 7.01(a)(xvii)-ի նպատակներով.

(a) օրենսդրական և կարգավորող շրջանակները, որոնք կիրառելի են Վարկառուի տարածքում քաղաքային լուսավորության ոլորտի նկատմամբ, պետք է փոփոխված, կասեցված, չեղյալ հայտարարված կամ հրաժարված լինեն որևէ կերպով, բայց ոչ թե Բանկի կողմից գրավոր հաստատմամբ,

(b) Կանոնադրությունները պետք է փոփոխված, կասեցված, չեղյալ հայտարարված կամ մերժված լինեն,

(c) Ծրագրի Սուբյեկտի վերահսկումը պետք է փոխանցված լինի որևէ կողմի, բայց ոչ Երևանի Քաղաքապետարանին,

(d) Ծրագրի սուբյեկտը պետք է ձախողած լինի Ենթավարկային Համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկի կատարումը, կամ

(e) Երևանի Քաղաքապետարանը կամ Ծրագրի սուբյեկտը պետք է ձախողած լինեն Ծրագրի աջակցության համաձայնագրով և/կամ Հանրային

սպասարկման համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկի կատարումը:

Բաժին 4.02. Մարման ժամկետի արագացում

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 7.06 (f)-ի նպատակներով.

(a) Երևանի Քաղաքապետարանը կամ Ծրագրի Սուբյեկտը չեն կատարել Ծրագրի աջակցության համաձայնագրի և/կամ Հանրային սպասարկման պայմանագրի ներքո իրենց որևէ պարտավորություն:

ՀՈԴՎԱԾ V – ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Բաժին 5.01. Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմանները

Հետևյալը սահմանվում է Ստանդարտ Պայմանների Բաժին 9.02(c)-ի նպատակներով՝ որպես սույն Համաձայնագրի և Ծրագրի Համաձայնագրի գործողության մեջ մտնելու համար լրացուցիչ պայմաններ.

(a) Ենթավարկային Համաձայնագիրը՝ Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ, ձևակերպվել և հանձնվել է, և դրա ուժի մեջ մտնելու կամ դրանով նախատեսված օգտագործումներ կատարելու Ծրագրի Սուբյեկտի իրավունքի բոլոր նախապայմանները, բացառությամբ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, բավարարվել են,

(b) Ծրագրի Համաձայնագիրը և Ծրագրի աջակցության Համաձայնագիրը ձևակերպվել և հանձնվել են դրանց բոլոր կողմերին, ինչպես նաև լիազորվել և վավերացվել են կառավարական և կորպորատիվ բոլոր անհրաժեշտ գործողությունների միջոցով,

(c) E5P Դրամաշնորհային համաֆինանսավորման տրամադրամն համար Դրամաշնորհային ամաձայնագիրը՝ Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ, ձևակերպվել և հանձնվել է, և դրա ուժի մեջ մտնելու կամ Վարկառուի՝ օգտագործումներ կատարելու իրավունքի բոլոր նախապայմանները, բացառությամբ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, բավարարվել են,

(d) Տեխնիկական համագործակցության միջոցների համար դրամաշնորհային համաձայնագիրը դոնորի, ՎԶԵԲ-ի և Վարկառուի միջև ձևակերպվել և հանձնվել է, և դրա ուժի մեջ մտնելու կամ Վարկառուի՝

օգտագործումներ կատարելու իրավունքի բոլոր նախապայմանները, բացառությամբ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, բավարարվել են, և

(e) Բանկին տրամադրվել են Ընկերության՝ աուդիտի ենթարկված 2014թ-ի ֆինանսական հաշվետվությունները, Բանկի համար բավարար ձևով ու բովանդակությամբ, և

(f) Ծրագրի Համաձայնագրի Բաժին 2.03-ում նշված ԾԻԱԽ-ը ստեղծվել է:

Բաժին 5.02. Իրավաբանական եզրակացություններ

(a) Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 9.03(a)-ի նպատակներով իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Վարկառուի անունից Արդարադատության Նախարարի կողմից, և հետևյալը սահմանվում է որպես լրացուցիչ հարցեր, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

(1) սույն Համաձայնագիրը և Ենթավարկային Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ վավերացվել է և հանձնվել է Վարկառուի կողմից և անունից համապատասխանաբար և կազմում է Վարկառուի վավեր և օրենքով պարտադրվող պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

(b) Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 9.03(c)-ի նպատակներով իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Ծրագրի Սուբյեկտի անունից, Ծրագրի սուբյեկտի իրավաբանի կողմից, և հետևյալը սահմանվում է որպես լրացուցիչ հարցեր, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

(1) Ենթավարկային Համաձայնագիրը և Ծրագրի Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ վավերացվել են և ձևակերպվել ու հանձնվել են Ծրագրի Սուբյեկտի կողմից և անունից համապատասխանաբար և կազմում են Ծրագրի Սուբյեկտի վավեր և օրենքով պարտադրվող պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

(c) Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 9.03(c)-ի նպատակներով իրավաբանի եզրակացությունը կամ եզրակացությունները պետք է տրվեն Երևանի Քաղաքապետարանի անունից Իրավաբանական վարչության պետի կողմից, և հետևյալը սահմանվում է որպես լրացուցիչ

հարցեր, որոնք պետք է ներառվեն Բանկին տրամադրվելիք եզրակացության կամ եզրակացությունների մեջ.

(1) Ծրագրի Համաձայնագիրը և Ծրագրի աջակցության Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ հաստատվել են և ձևակերպվել ու հանձնվել են Ծրագրի Սուբյեկտի և Երևանի Քաղաքապետարանի կողմից և անունից, համապատասխանաբար, և կազմում են Ծրագրի Սուբյեկտի և Երևանի Քաղաքապետարանի, եթե կիրառելի է, վավեր և օրենքով պարտադրվող պարտավորություն՝ կիրառելի համաձայն դրա պայմանների:

Բաժին 5.03. Գործողության մեջ չմտնելու հիմքով Դադարում

Ստանդարտ պայմաններ և դրույթների Բաժին 9.04-ի նպատակներով սահմանվում է սույն Համաձայնագրի ամսաթվից հետո 180 օր անց ամսաթիվը:

ՀՈԴՎԱԾ VI - ԱՅԼ

Բաժին 6.01. Ծանուցումներ

Հետևյալ հասցեները սահմանվում են Ստանդարտ Պայմանների Բաժին 10.01-ի նպատակներով.

Վարկառուի համար՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
Երևան, 0010
Մելիք-Ադամյան փողոց 1

Ուղղվում է՝ Միջազգային համագործակցության վարչություն

Ֆաքս. + 374 11 800 132

Բանկի համար՝

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
Միացյալ Թագավորություն,
Լոնդոն EC2A 2JN,
Ուան Իքսչեյնջ Սքուեըր

Ուղղվում է՝ Գործառնությունների Կառավարման Բաժին

Ֆաքս՝ +44-20-7338-6100

ՎԵՐՈՀԻՇՅԱԼԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, սույն փաստաթղթի կողմերը, գործելով իրենց՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագրի չորս օրինակները և հանձնեցին դրանք Երևանում, Հայաստանի Հանրապետություն, վերը նշված ամսաթվին:

Հայաստանի Հանրապետություն

_____

Անուն՝

Պաշտոն՝

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿ

_____

Անուն՝
Պաշտոն՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ծրագրի նպատակն է. աջակցել Վարկառուին 28 ընտրված փողոցներում քաղաքային լուսավորության համակարգի արդիականացմանը՝ նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման միջոցով:

2. Ծրագիրը բաղկացած է հետևյալ Մասերից, որոնք ենթակա են այնպիսի փոփոխությունների, որոնց շուրջ Բանկն ու Վարկառուն կարող են ժամանակ առ ժամանակ փոխհամաձայնության գալ.

Մաս Ա: Կապիտալ ծախսեր

- քաղաքային լուսավորության լուսադիոդային ("LED") համակարգ (լամպեր, վերահսկման և մոնիտորինգի կենտրոն, սյուների և մալուխների փոխարինում)

Մաս Բ: Տեխնիկական համագործակցություն

- Ծրագրի իրականացման աջակցության և Ինժեներական ծառայությունների ծրագիր

- Կորպորատիվ զարգացման ծրագիր

3. Ակնկալվում է, որ Ծրագիրն ավարտվելու է մինչև 2018թ. սեպտեմբերի 30-ը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2 – ԴԱՍԵՐ և ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

1. Սույն Հավելվածին կցված աղյուսակը սահմանում է Դասերը, յուրաքանչյուր Դասին հատկացված Վարկի գումարը և յուրաքանչյուր Դասում ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսային հարաբերությունը:

2. Չնայած վերը բերված պարբերություն 1-ի դրույթներին, ոչ մի Օգտագործում չպետք է կատարվի մինչև Վարկային Համաձայնագրի ամսաթիվը տեղ գտած ծախսումների առնչությամբ:

Հավելված 2-ին կից աղյուսակ

Դաս	**Հատկացվող Վարկի Գումարը՝ Վարկի Արժույթով**	**Ֆինանսավորվելիք ծախսումների տոկոսային հարաբերությունը**
(1) ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ Ա Մասի համար	3,960,000	Պայմանագրային արժեքի մինչև 100 % առանց որևէ Հարկերի
(2) Մեկնարկային կոմիսիոն վճար	40,000	100%
Ընդամենը	**4,000,000**	